ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 177

<<04>> հունիսի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ 164 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ կետերի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ,3-րդ կետերի դրույթներով **որոշում եմ՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի /բնակավայր Մայիսյան/ <<ԹԱՆԳՐԱՄ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփական իրավունքով պատկանող հողամասի պահեստարանների գործառնական նշանակությունը փոխելու և ինքնակամ կառուցված պարիսպները օրինական ճանաչելու մասին>> թիվ 164 որոշման հիմքից հանել <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 02-ի <<Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոխելու կարգը հաստատելու մասին>> N 88>> բառերը և թվերը, <<N757-Ն>> թվից և տառից հետո լրացնել <<Արտադրական նպատակային նշանակության շենքերի, շինությունների դասակարգման ցանկ N 3 հավելված 2-րդ կետ>> բառերով և թվով. <<13-րդ կետի <<բ>> ենթակետի>> բառերը և թիվը փոխարինել <<16-րդ կետի <<բ>> ենթակետի>> բառերով և թվով:

Որոշման 5-րդ կետի ա/ ենթակետում <<13-րդ կետի <<բ>> ենթակետի>>, <<6-ապատիկի>>, <<6000>>, <<33000 /երեսուներեք հազար/>> թվերը և բառերը փոխարինել <<16-րդ կետի <<բ>> ենթակետի>>, <<15-ապատիկի>>, <<15000>>, <<82.400 /ութսուներկու հազար չորս հարյուր/>> բառերով և թվերով, գ/ենթակետում <<33000 /երեսուներեք հազար/>> թիվը և բառերը փոխարինել <<82.400 /ութսուներկու հազար չորսհարյուր>>թվով և բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

04.հունիսի.2020 թվական
Գյուղ Մայիսյան